



Զեկոյց — Մառն-լա-Վալէի Հայկական Մշակութային Միութիւն

Ապրիլեան նահատակաց 94րորդ տարեդարձին առթիւ յարգանքի հաւաք, փարիզի արուարձան՝ Շարանթոն-լը-Փոնի մէջ, 23 Ապրիլ 2009-ին:

Յաջորդական հինգերորդ տարին ըլլալով Մառն-լա-Վալէի Հայկական Մշակութային Միութիւնը, գործակցաբար Շարանթոն-լը-Փոնի քաղաքապետութեան հետ, կը կազմակերպէ յիշատակի հանդիսութիւն մը՝ նուիրուած մեր ապրիլեան զոհերուն, անոնց ի պատիւ կանգնեցուած խաչքարին առջեւ: Հակառակ դպրոցական արձակուրդին՝ աւելի քան յիսուն հոգի ներկայ էին՝ Հինգշաբթի, 23 Ապրիլին, սգահանդէսին:

Քաղաքապետ՝ Պարոն Ժան-Մարի Պէրթիյոնին, ընկերակցութեամբ քաղաքապետարանի վարչութեան արդամներուն, մեր միութեան անդամներուն, Ֆրանսահայ նախկին ուսանողներուն, խաչքարին նուիրատու մեծ բարերար՝ Պարոն Ռոժէ Զրբաշեանին, ինչպէս նաեւ Ալֆորվիլի Հայոց Առաքեալական Ս. Պողոս-Պետրոս եկեղեցւոյ հովիւ շնորհազարդ՝ Ժայրագոյն վարդապետ Հայր Ներսէճ փապուճեանին, սարգաւազներու ընկերակցութեամբ, ներկայ էին այդ արարողութեան: Առաջին անգամ ըլլալով ներկայ էր, փարիզի Հայաստանի դեսպանութեան պաշտօնեայ՝ Արա Մկրտիչեանը: Յատուկ հրաւերով եկած էր վիպասան Ժիլպեր Սինուէի՝ հեղինակ «Երեւան» նշանակալից վէպին:

Պարոն Պերթիյոն հակիրճ ճառ մը արտասանեց, որուն մէջ վեր առաւ «Երեւան» վէպին ցնցիչ իր տպաւորութիւնը: Յայտարարեց նաեւ որ այս տարի Տարագրեալներու յիշատակումը տեղի պիտի ունենայ 27 Ապրիլին: Այնուհետեւ մեր նախագահուին՝ Անի Փիլիպոսեան խօսք առաւ ու յուշեց պատմական եղելութիւնները, նաեւ հայկական սփիւռքի կարեւոր դերը յառաջիկայ դէպքերու առնելիք ընթացքին մէջ (Կարդալ քովընտի իր ասոյթը ֆրանսերէն լեզուով): Յիշեց նաեւ Հայաստանի եւ Զավախքի կացութիւնը : Այնուհետեւ խօսքը փոխանցեց Պարոն Ժիլպեռ Սինուէին, որ կարդաց էջ մը իր վէպէն: Հանդիսութիւնը եղաւ կարճ ու տպաւորիչ շնորհիւ նախկին ուսանողներու փորձառու գործակցութեան: Ծաղկեպսակներու զետեղումէն ու ֆրանսական եւ հայկական քայլերգներու ունկնդրութիւնէն ետք հետեւեցաւ մէկ վայրկեան լուռութիւն՝ մեր նահատակներու սուրբ հոգիներուն համար:

Վերջաւորութեան ունկնդրեցինք, խտասալիկներու վրայ, կոմիտասեան երկու երաժշտութիւն՝ կատարողութեամբ տուտուքով վարպետ Զիւան Գասպարեանի:

Ամէն...